ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությունը՝ առարկությամբ Ազգային ժողով եմ վերադարձնում Ազգային ժողովի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-55-Ն օրենքը չեղյալ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքները:

Հաշվի առնելով վերոհիշյալ օրենքների ուժի մեջ մտնելու հետևանքով Հայաստանի Հանրապետությունում շահումով մեքենայացված խաղերի քանակի հնարավոր ավելացման ոչ ցանկալի սոցիալական հետևանքները, ինչպես նաև օրենքով նախատեսված ներդրումային ծրագրերի իրականացման և այլ դեպքերում շահումով խաղերի կազմակերպման համար տարեկան պետական տուրքի չափը բարձրացնելու նպատակահարմարությունը՝ առաջարկում եմ օրենքներն ընդունել կից ներկայացվող նոր խմբագրությամբ:

Առդիր՝ 8 էջ:

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 18
ՀՆ-2202